

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՎԼԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ, ԱՇԵԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԳԱՍՍԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Քիւրդ իշխանական եւ ժողովրդական հերոսներու քիւր-
Անոնց հոգեբանական ու Ֆիզիքական յասկանիւթերը.)

Կարգալով քիւրդ Մահմուտ էֆ. իր Գուրմաննի պատմուած-
ները՝ որոնք զանազան գնահատուած կտորներ են քիւրդ ժո-
ղովուրդի կողմէն՝ արդիւնք իրենց հին ու նոր կեանքի, յար-
մար դատեցինք տալ ամեն մի պատմուածի իմաստը, ու եզ-
րակայութիւնը հանելով՝ ցուցնել անոնց հոգեբանական ու ֆի-
զիքական յատկանիշերը :

1. «Ագահ Մուլլա» .

2. «Մուլլաներու ազահութիւնը» } Պարզ նկարագրութիւն մը

է հոգեւորականներու ազահութեան : Այս տեղ կը պարզուի
քիւրդերու հայեացքը դէպի հոգեւորականութիւնը :

3. «Մուլլան Պագիտ» . Ողորմութեան նշանակութեան մէկ
հերքումը . ասով կը պարզուի անոնց ողորմութեամբ չ'սպրե-
լու և ողորմութեան չ'սպասելու գաղափարը :

4. «Միրզո-Րէշօ» . Մրցում աւազակութեան մէջ ու վրէժ-
ինդրութիւն . դէպքը տեղի կ'ունենայ Քիւրդի և Եզիտի մէջ :
Իրենց շատ և յաճախ արտայայտուած բնաւորութիւնը :

5. «Մէհմէտ պէյ» . Սպանութիւն և գողութիւնն է նիւթ-
Բացատրութիւններ աւելորդ են :

6. «Տէլի Իսմայիլ աղա» . Յարձակումն փաշայի վրայ և
սպանութեան փորձ . պատմուածի մէջ կայ հետեւեալ բացատ-
րութիւնը, որը կ'ընդունինք իբր յատկանիշ . «Քրդերը որո-
շում մը կայացնելու մէջ արագ են, և ամենեւին հետեւանքնե-
րու համար չեն մտածեր, ինչ որ խելքերնուն ինկաւ, միջոց կը
վնտռեն գործադրելու . իրենք անտարբեր են դէպի մահը,
կեանքը, և զոհուած զաւակներու բաղդը :

7. «Մէհմէտ Կիւլբի» . Եզիտիները կը յարձակուին որ